

~~301~~
Պրոլետարնե՞ր բոլոր երկների, միացէ՛ք,

Ա. ՓՐԻԶԵ.

Ս Ո Յ Ի Ա Լ Ի Զ Մ

Թարգմ. ռուսելիննի երկրորդ ուղղած հրատարակութիւնից。

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

№ 39

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՆԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱԳԻ

ՄԱՍԿԻԱ—1919

№ 39

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌՄՈՒՆԴԱԾԱԿԱՆ ԿՈԽԱԿԱՑՈՒԹԵԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐ.
ՀԵՇԻ ԿԱՌՄՈՒՆԴԱԾԱՅ ՀԲԱՏԱՔՄԱՆԹԵԱՄՐ Լ.830 ԵՎ ԶԵՍԼ.
- 1) Ա. Աղջ. Ֆեղ. Խորհը. Հանրապետութեան Սահմանադրութիւնը:
 - 2) Ն. Լենին. «Նամակ Ամերիկան բանւորներին—զի՞նը՝ 1 թ.
 - 3) Ա. Գրիգ. «Պրոլետարական պոկեան—զի՞նը՝ 3 թ.
 - 4) Հ. Հերին. «Բժիշտից յետոյց (Ձեզուցում Խորհութաների 5-րդ Հազորամարին)—զի՞նը՝ 1 թ.
 - 5) Ներքւ. Շնէպքեց Բազւում. Հ. Յ. Դաշնակցութիւնը և Բազւք Խորհրդային Խշանութիւնը—զի՞նը՝ 1 թ.
 - 6) Ն. Լենին. «Կառլ Մարքս (Համառա կենսագրութիւնը և մար. բախչի շատաբութիւնը)—զի՞նը՝ 3 թ.
 - 7) Ներքւ. «Բուռական Յեղափոխութիւնը և պրոլետարիատի տակ-արկան—զի՞նը՝ 1 թ.
 - 8) Ն. ԲՈԽՈԾԻՆ. «Կոմմանիստների ծրագիրը—զի՞նը՝ 10 թ.
 - 9) ՊԱԿՈՎԾ. (Ակոմման) «Ասիան և իր զեզը հաճաշնաբային պատերազմի ձգչութիւնը՝ զի՞նը՝ 7 թ.
 - 10) ԿՈՉԻ ՌԵՆԻՆ. 1 Կոմմանիստական Կուսակցութիւնը Գերմանիա-յում. Ա. «Կարլ Լիբրէնսոս (Լիբրէնսոսի նկարով)—զի՞նը՝ 1 թ.
 - 11) «Ամորհրդային Կուսակարութեան նոտան Ալիսոնին—զի՞նը՝ 1 թ.
 - 12) «Միանաւան աշխատանքաժին զրոյցի կանոնագրութիւնը»—զ. 3 թ.
 - 13) Հ. ՅՈՒՆԻ. «Դեպէ բաղաբական հոփու—զի՞նը՝ 1 թ.
 - 14) Դ. ՋԱՆՈՎՆԻ. Ի. ԿԱՊԵՆԵՆ. և Լ. ՏՐՈՅՆԻ—«Ն. Լենին (Ալա-գիմիո Ի.իշ Ուրեանով)—զի՞նը՝ 3 թ.
 - 15) Կ. ՄԱՐք. և Փ. Էնգել. ԱԿոմմանիստական Մանիֆեստո—Պետքա-նովի, Կառլը և հեղինակների առաջապահներով—զ. 10 թ.
 - 16) Պ. ԼԵՖՈՐ. «Տնտեսական Ուղղութիւն և Կոմմանիբզմ»—զ. 3 թ.
 - 17) ԿՈՎՊԻՆԱԿԻ. «Ունի ըստ է Խորհրդային Խշանութիւնը և ինչ-պես է Խա Կազմւում»—զի՞նը՝ 2 թ.
 - 18) «Քրանսիական Մէջ Յեղափոխութիւնը»—զի՞նը՝ 3 թ.
 - 19) Կ. ԿԵՐՃԵՆՅԵՆ. «Խելպատ մարէ ժողովը»—զի՞նը՝ 3 թ.
 - 20) Կ. ԵՐԵՄԵՆԻ. «Սոսիալիստական Խորհրդ. Հակոսութեանութիւն» զ. 2 թ.
 - 21) Կ. ՐՈՊԻՆԱԿԻ. «Ուստի հու էր զուք. զիւզացիք»—զի՞նը՝ 1 թ.
 - 22) Պ. Ա. ԱՆՆԵՆԵՆ. «Հայ փախտականներին»—(Հրի):
 - 23) Ռուսաստանի Կոմմանիստական Կուսակցութեան (Բոլշևիկների) ծրագիրը—զի՞նը՝ 3 թ.
 - 24) Խակինացինալի Պլատիորման—զի՞նը՝ 1 թ.
 - 25) Ն. Լենին. «Թէզիոնն Խուօժուական և պրոլետարական զեմոկա-տիամի մասին—զի՞նը՝ 50 կոռ.
 - 26) «Հայաստանի Կոմմանիստական Կուսակցութեան ներկայացու-թիյի զեկուցումը III Կոմմանիստական Խետենացիօնալին»—զի-նը՝ 60 կ.
 - 27) «Կոմմանիստական Խետենացիօնալի Մանիֆեստը աժքողջ աշխարհի պրոլետարիներին»—զի՞նը՝ 1 ըստը.
 - 28) Ն. Լենին. «Երթող Խետենացիօնալի տեղը պատմութեան մէջ»—զի՞նը՝ 1 թ.
 - 29) Ն. Լենին. «Երթող պէտք է լինի մեր Կուսակցութեան ահունը»—զի՞նը՝ 1 թ.
 - 30) Պ. ԱՆԵԿՈՒՆ. «Թալանի բաժանումը» զի՞նը՝ 1 թ.
 - 31) ԿԱՐԻՆԵՆ. «Եմպերիալիզմ և Արմենիա»—զի՞նը՝ 5 թ.
 - 32) «Կարմիր Աստղ»—զի՞նը՝ 50 կ.

Վ. ՓՌԻՉԵԼ

Ս Ո Ց Ի Ա Լ Ի Զ Մ

Խարգմ. ուսերինի երկուող ուղղած հրատարակութիւնից.

Ս Ո Ց Ի Ա Լ Ի Զ Մ

Բուրժուազ - կապիտալիստական հասաւակութեանը բարեկութեան հիմնական բնոյթագծերը

Ժամանակակից հասարակութիւնը «բուրժուական» է կոչում այն պատճառով՝ որ նրանում լոիրապետութիւնը բուրժուազիալին (կապիտալիստներին) է պատկանում, իսկ «կապիտալիստական» է կոչում նա նրա համար, որ բուրժուազիոն գրադաւում է կապիտալիստական տնտեսութեամբ, այսինքն մեքենաների օգնութեամբ ահագին քանակութեամբ ծախու ապրանքը է արտադրում և վաճառում է այդ ապրանքը հայրենի (ներքին) և օտար (արտաքին) շուկաներում:

Ժամանակակից հասարակութեան մէջ տիրապետող զասակարգը բուրժուազիան է, այդ այն հիմունքով՝ որ նրան են պատկանում զենքերը կամ արտադրութեան միջոցները, օրինակ, գործարանները, մեքենաները, կապիտալը: Աւրիշ կերպ ասած, ժամանակակից հասարակութեան մէջ տիրապետողը նա է որին՝ որ պատկանում են որ-



11-249669/1

պէս մասնաւոր սեփականութիւն զէնքերը կամ արտադրութեան միջոցները: Իսկ որովհետեւ կապիտալիստին են պատկանում թէ գործարանը, թէ մեքենաները և թէ կապիտալիստը, այդ պատճառով էլ հէնց նրան են պատկանում այն բոլոր արդիւնքները, որ պատրաստում են այդ իսկ արտադրութեան միջոցների օգնութեամբ: Այսպիսով, ուրեմն ժամանակակից հասարակութեան մէջ մասնաւոր սեփիականութիւնն իր տիրապետութիւնը տարածում է ոչ միայն արտադրութեան միջոցների վրայ՝ այլ և սպառման ենթակա արդիւնքների վրա:

Ժամանակակից հասարակութեան մէջ սակայն, ամէն մարդ արտադրութեան միջոցների սեփիականատէր չի հանդիսանում: Նատ շատերն այդ տեսակի սեփիականութիւնից բոլորովին զուրկ են: Այդ պատճառով էլ նրանք ինքնուրոյն տնտեսութեամբ զբաղւել չեն կարող: Միակ բանը որ նոքառնին՝ դա իրանց աշխատաւորական ձեռքերն են: Անցեալ գարի սկզբին, Անդիսում, այդ տեսակի, բացի իրանց ձեռքերից ոչ մի սեփիականութիւն չունեցաղ մարդկերանց «ձեռքեր» էին անւանում: Վերջիներս իրանց «ձեռքերը», իրանց աշխատանքը ծախում են այն տեսակի մարդկանց՝ ովքեր որ արտադրութեան միջոցների տէր են: Այսպիսով ուրեմն ժամանակակից հասարակութիւնը երկու դասակարգի է բաժանված, բուքագիտականութեամբ:

Էթ և պրոլետարիատի, սեփիականատէրերի և սեփիականազուրկերի¹⁾

Որովհետեւ զէնքերը կամ արտադրութեան միջոցները, այսինքն գործարանները, մեքենաները և կապիտալիստները պատկանում են առանձին առանձին կապիտալիստների կամ նրանց ընկերութիւններին, ապա ուրեմն բանւորներն էլ ենթարկում են նրանց, իսկ որովհետեւ պետականութիւնն էլ է գտնուում կապիտալիստների ձեռքին, այդ պատճառով էլ նոքա բանւորների հետ վերաբերում են տինապէս' ինչպէս որ իրենց հանելի է:

Այսպէս ուրեմն, ժամանակակից հասարակութիւնը երկու մասի է բաժանուում, տէրերի և սորուկների:

Կապիտալիստները, որոնց պատկանում է թէ պետական իշխանութիւնը և թէ արտադրութեան միջոցները, տնտեսութեամբ զբաղւում են բացառապէս իրանց շահերի և օգուտների համար: Նորա ապրանքն արտադրում են մեծ քանակութեամբ, որպէս զի նրա վաճառումից ըստ կարելուն շատ շահ ստանան: Կապիտալիստը բացառապէս շահելու համար է անտեսութեամբ զբաղւում:

Ինըն ըստ ինքեան հասկանալի է, որ նա

1) Խնձ սեփիականատէրնի դասակարգի ու պրոլետարիատի միջև կայ և մասը սեփիականատէրնի, պիտացիների, արմատաւորների պատկարը, ունցից նարաւորները անց կենում են բուքագիտակի խոնճ իսկ ըստորների պլութօտարիատին ևս միանում:

այնքան աւելի շատ է վաստակում, որքան աւելի
քիչ ծախք է անում արտադրութեան վրայ Ալդ
հախքերի որոշ մասը, նա ուզի չուզի պիտի անի:
Դրինակի համար, եթէ նրա գործարանը գտնուում
է մի այնպիսի հողամասի վրայ, որը տէր ունի՝
սպա, նա Գարկադրւած է նրա համար վճարել այն-
քան, որքան որ կպահանչի հողատէրը. իսկ եթէ
նրան մեքենալ գնել է հարկաւոր, ապա նա պէտք
է մեքենայի համար նոյնողէս վճարի այնքան, որ-
քան որ կպահանչի մեքենաների գործարանատէրը:

Բայց կայ մի տեսակ ժախը՝ որ կապիտալիստն
ըստ իր ցանկութեան կարող է կրնատէլ, դա բան-
որի աշխատավարձն է: Որքան բարձր է լինում
ոանուրի տշխատավարձ՝ այնքան քիչ է լինում
հապիտալիստի շահը: Եւ կապիտալիստները ձգ-
տում են ըստ կարելոյն քիչ վճարել բանուորնե-
րին, միւս կողմէց էլ ստիպում են նրանց որ որ-
շան կարելի է շատ աշխատեն:

Իսկ բանուորի համար ի՞նչ տեսակի հետե-
անքներ կարող են ունենալ քիչ աշխատավարձն
ու երկարատե բանուորական օրը:

Իր աշխատանքի համեմատութեամբ քիչ վարձ
ստանալով բանուորը ստիպւած՝ պիտի ապրի հա-
կառողջապահական ընակարգանում, վատ պիտի
չնւի, վատ հազւի, իսկ երկարատե աշխատանքի
որը պիտի հիւծի նրա ոյժերը, առողջութիւնը
շալքայի, զրկի մտաւոր պատրաստականութիւն

ձեռք բերելու հարուսրութիւնից, քաղաքական
և հասարակական կեանքին բաւարար չափով մաս-
նակցելուց և կուլտուրայի (գեղարւեսա, գիտու-
թիւն, գրականութիւն) բարիքներից օգտուելուց:
Նրա ընտանիքն էլ է այդ զրութեան մէջ զանուում:
Բանուրի կինը շատ յանախ ստիպւած է լինում
գործարանում աշխատել, իսկ որդիները նախնա-
կան գպրոցներում ստանում են շատ խղճալի կր-
թութիւն: Այսպիսով ժամանակակից հասարակու-
թիւնը բաժանուում է շահագործողների և շահա-
գործողների:

Բանուրը որքան աւելի դիտակից լինի, նրա
դասակարգը որքան աւելի կազմակերպւած լինի
որպէս մի ամբողջութիւն, այնքան աւելի նա քիչ
կցանկայ և կամ կկարողանայ հաշտւել իր անա-
զատ վիճակի հետ: Նա կլարի ամրող ոլժերը որ-
պէսպի իր զրութիւնը բարելաւի, աշխատավարձը
բարձրացնի բանուորական օրը կարճացնի, պետու-
թեան մէջ ձայն և ազգեցութիւն ձեռք բերի, նա
իր այդ բնական և օրինական իւաւունքներին
ձգաելիս հանդիպում է կապիտալիստ դասակարգի
կողմից բուռն դիմադրութեան: Բուրժուազիան
վախենալով որ լինի թէ պետական իշխանութիւ-
նից և շահերից զրկւի՝ դիմում է ամէն տեսակի
միջոցների որպէսզի կարողանայ բանուորի ուսն
ձեռքը կապել և խանդարել նրան իր նպատակնե-
րին հասնելու: Երկու գասակարգերի միջև բարբոք-

ւում է մի անընդհատ տնտեսական և քաղաքական կույտ, որ մերթ ընդ մերթ փոխում է բոցարձակ քաղաքացիական կույտ, ինչպէս որ լաճախ էր պատահում ալի, օրինակի համար Ֆրանսիայում:

Ժամանակակից հասարակութիւնը բաժանելով շահագործողների և շահագործւողների՝ ի վերջով, զնում է գէպի անվիրշանալի դաստիարդացին կոխուը:

Կապիտալիստների տիրապետութիւնը յանունիրանց շահերի ժանրանում է ոչ միայն բանորուների այլ և լաճախ ամբողջ հասարակութեան և ամբողջ ազգաբնակութեան վրայ. Ապրանքները պատրաստելով ծախելու համար, և պատրաստելով որքան կարելի է շատ, որպէսզի* ըստ հետառութեան աւելի շատ շահ ստացւի, կապիտալիստն ամեննեին հոգս չի քաշում այն մասին, թէ արդեօք ապրանքների այդպիսի քանակութիւն հարկաւո՞ր է, շուկան կարիք զգո՞ւմ է, ու ահա հասնում է այնպիսի ժամանակ, երբ շուկան ապրանքներով բերնէ բերան լիցւում է, ապրանքն այլև չի ծախւում և առևտուրը կանգ է առնում, գործարանները փակւում են, հաղարաւոր բանւորներ փողոց են շպրտում, միջին և փոքր գործարանատերերը սնանկանում են, մանր սեփհականատերերը կորցնում են իրանց անտեսած գումարները, տնտեսական կեանքն ամբողջապէս քայլքալում է և ազգաբնակութեան լայն մասսաներում սկսում

են երետն դալ ոճրագործութիւններ ու աղքատութիւն:

Ճգնաժամի հետեանքները սարսափելի են, նոր հասարակական և տնտեսական շենքը հիմնիվար յնցում են:

Այսպիսով ուրեմն ժամանակակից բութուակապիտալիստական հսսարակութեան զլխաւոր պահասութիւնները հետեւալներն են.

1) Նա բաժանուած է երկու մեծ դաստիարգերի, սեփհականատերերի և պրոլետարների, շահագործողների և շահագործւողների.

2) Այդ երկու դաստիարգերի մէջն առաջ է գալիս տնտեսական և քաղաքական անընդհատ կոիւ.

3) Կապիտալիստների տիրապետութիւնը բացառապէս յանուն իրանց շահերի, ոչ միայն բանոր գաստիարդին տնտեսապէս ժանը կացութեան մէջ է զնում այլ և առաջացնում է «ճգնաժամեր» (կրիզիս)՝ որ ուժեղ կերպով հնչում է ժողովրդական լայն մասսաներին:

Վերևում լիշտած բոլոր չարիքների հիմնական պատճեառը՝ արտադրութեան միջոցների մասնութոր սեփհականութիւն լինելու մէջ է կայանում: Հենց այն պատճեառով, որ արտադրութեան միջոցները պատկանում են մասնաւոր մարդկանց, կապիտալիստներին, իոկ կապիտալիստները տնտեսութիւնը վարում են յանուն իրանց շահերի՝ ժամանակակից

հասարակութիւնը բաժանեց շահագործողների և շահագործողների, որոնք անընդհատ կռիւ են մում միմեանց դէմ, և հէնց այդ պատճուռի էլ երկրի անտեսական կեանքը խանգարւում է նպաստամերութիւնը:

Այս բոլորից արդէն պարզ կերպով երեսում է որ ժամանակակից բուրժուա - կապիտալիստական հասարակութեան միջից մութ և քայլալիչ առանձնայտակութիւնները կոչնչանան միմիայն այն դէպրում, երբոր արտադրութեան միջոցների վրայ դոյտաթիւն ունեցող մասնաւոր սեփականութիւնը վերանալ, կամ նաև իր տեղը զիջի արտադրութեան միջոցների հասարակական սեփականութեան, այսինքն եթէ գործարանները, մեքենաները, կապիտալները (նոյնպէս և հողը) դառնան բոլորի՝ ամբողջ հասարակութեան սեփականութիւնը:

Ի՞նչ բան է սոցիալիզմը.

Այնպիսի հասարակական կազմ, որ գոյութիւն չունի դէնքերի և տրամադրութեան միջոցների մասնաւոր սեփականութիւն, որտեղ բոլոր գործարանները, կապիտալները, մեքենաները և հողը բոլորի և ամբողջ հասարակութեան սեփականութիւնն են կազմում այդպիսի հասարակական կազմը կոչներն այդ լաւ բարեկան սոցիալիստական:

Է և նշանակում է «հասարակական» պնդհանուր:

Դեռ վաղուց, անցեալ դարի (տասներեններորդ) առաջին կէսերից սկսած, երբ Եւրոպայում հէնց նոր հաստատւեց արտադրութեան բուրժուական կապիտալիստական եղանակը, նրա հետ էլ միաաեղ ներկալի բուրժուա - կապիտալիստական հասարակութիւնը, բուրժուաղիալի և ինտելիգենցիալի շարքերից չոկ չոկ մտախոհ ներկայացուցիչներ կապիտալիստական հասարակաբարզը բազմակողմանի ուսումնասիրութեան ենթարկեցին, պարզեցին նրա բացասական կողմերը, հասարակութեան նոր կազմի համար որոշ վարդապետութիւն մշակեցին, նոր սկզբունքներ ստեղծեցին և այդ ամբողջ նոր վարդապետութիւնը «Սոցիալիզմ» անւանեցին, իսկ ամենանոր հասարակութիւնը որ պիտի փոխարինէր բուրժուա - կապիտալիստականին՝ սոցիալիստական»։ Այդ առաջին սոցիալիստներն այնպէս եին կարծում թէ, նոր հասարակութեան իրականացումը հեշտ բան է, նրանց ասելով բաւական էր կապիտալիստներին ապացուցել, որ նոր, սոցիալիստական հասարակութիւնն աւելի կատարեալ, աւ ելի լաւ է քան ժամանակակից կապիտալիստական կազմը, և նորա իրանք կօգնէին այդ լաւ և անհրաժեշտ գործի իրականացմանը։

Բուրժուազիան կարող է սոցիալիզմն
իրականացնել:

Այդ առաջին սոցիալիստներից ամենից յայտնիները անդիմացի Օռւէնը և Փրանսիացիներ Ֆուրիէն ու Կարէն էին:

Նրանք բոլորը լոյսերով լի, աչքերը յառել էին դէպի ապագան: Բայց քանի որ մի քանի դէմքեր բանականութեան միջոցով հասկացան արդէն ներկայ հասարակակարգի բացառական կողմնը, քանի որ նոքա արդէն գիտեն թէ ինչպէս պէտք է կառուցւի նոր հասարակութիւնը, որպէսզի կապիտալիզմի մութ և աւերիչ ազդեցութիւններին վերջ արւի, ապա՝ նրանց թւում էր թէ բոլորովին դժւտը չէ համոզել ուրիշներին այդ բանում և նրանց իսկ շարքերից գտնել իրանց համար աշխատակիցներ և օգնականներ: Իսկ որպէսզի ուրիշներին էլ կարողանային համոզել այդ բանում, թէ սոցիալիզմը կապիտալիզմից գերազանցօրէն բարձր է, սկսեցին այդ ապագայ սոցիալիստական հասարակութեան կաղմը մանրամասն կերպով նկարել: Սոցիալիստական կազմի մասին հրապուրիչ պատկերներ նկարեցին թէ Ֆուրիէն և թէ Կարէն: Իրանց քարոզը նոքա ուղղում էին գլխաւորապէս կապիտալիստներին և ինտելիգենցիալին: Նրանցից մէջն առում էր, «հարուստ և կրթւած մարդիկ աւելի ազդեցիկ են, եթէ անհրաժեշտ է այդ (սոցիա-

լիստական նոր հաւատքի բերել) հարուստներին և թէկուղ աղքատներին»:

Այդ առաջին մի քիչ միամիտ սոցիալիստները ամեններն չէին կասկածում թէ սհարուստ և կրթւածոց մարդիկ կարող են իրանց մերժել: Կարէն հարցնում էր, «մի՞թէ մեծառողի, արդարամիտ և լուսաւորւած հարուստներ չկան»:

Բայց իհարկէ նրանք սխալւեցին: Կապիտալիստի համար աւելի շահաւետ է, պահպանել ժամանակակից կապիտալիստական հասարակութիւնը, որտեղ թէ տնտեսական և թէ քաղաքական աիրապետութիւնն իրան է պատկանում, քան թէ սոցիալիստական կարգերը, որտեղ բոլոր մարդիկ միակերպ իրաւունքներ պէտք է ունենան: Այդ պատճառով էլ այդ սոցիալիստների «հարուստ և կրթւածոց մարդկանց ուղղած բոլոր կոչերը մնացին առանց որևէցէ արձագանքի»:

Այսպէս, Ֆուրիէն շատ հրապուրիչ գոյներով նկարագրեց սոցիալիստական հասարակութիւնը կամ «Ֆալանսաէր»-ը (ինչպէս նա ինքն էր անւանում), որտեղ կեանքը բոլորի համար էլ դրախտ պէտք է դառնայ: Այդպիսի ֆալանսատէրի կառուցման համար փող էր հարկաւոր: Նա սպասում էր թէ, հա՛, էսա միլիոններ ունեցող բարեգործը կդայ և հարկ եղած փողերը կտայ: Նա սպասեց սպասեց և նպաստին չհասած մեռաւ:

Այսպիսով խորտակւեց այն լոյսը, թէ ինքը

բռւրժուազիան, իրանք կապիտալիստները կդան
օդնութեան և կիառուցեն նոր սոցիալիստական
հասարակակարգը: Այդ առաջին սոցիալիստները,
որոնք երազում եին թէ «հարուստ և կրթւածք
մարդիկ նոր և աւելի կատարեալ հասարակութեան
հիմքը կդնեն՝ կոչւցին «սոցիալիստներ ուտոպիստ-
ներ», «ուտոպիա» բառից՝ որ նշանակում է «անի-
րականանալի երազ»:

Կ ո ո պ ե ր ա ց ի ա չ ի մ ի շ ո ց ո վ ս ո ց ի ա լ ի զ-
մը ն ի ր ա գ ո ր ժ ե լ ո ւ փ ո ր ձ ե ր ը.

Երբոր կապիտալիստների վրայ դրւած լոյսը
ի գերև ելաւ՝ Օուէնի, Ֆուրիէլի և Կաբէի հետև-
որդները փորձեցին սոցիալիզմն ուրիշ ճանապարհով,
ընկերական կոոպերացիալի միջոցով իրականացնել: Մի ժամանակ ենթադրում եր թէ՝ մի քանի մար-
դիկ միանալով կկազմեն մի ընկերութիւն, որեկիցէ
տեղում, եւրոպակից հեռու, ասենք Հիւսիսային
Ամերիկայում ազատութեան և հաւասարութեան
երկրում հոգ ձեռք կբերեն, սոցիալիստական հա-
մայնք կկազմակերպեն և կհիմնեն նոր, ընկերական
լաւ հիմունքներով կեանք: Թայյ ալդ փորձերն էլ
ոչ մի եղակացութեան չանգեցին:

Մի քանի օրինակներ բերենք:

Անցեալ դարի 20-ական թւականներին Օուէ-
նի հետևորդներից հարիւր ընտանիք ուղեարւեցին
Ամերիկա և Օխակա նահանգում Սոցիալիստական

համայնք հիմնեցին, այնտեղ հողը և արտադրու-
թեան միջոցները բոլորին էր պատկանում: Այդ
համայնքը տեղի անունով կոչւեցաւ «Դեղին աղ-
բիւրների համայնքներ»: Համայնքի անդամների մի-
ջև սակայն շռւտով տարածանութիւններ և վեճեր
սկսեցին: Մի քանիսը բուրժուական ծագում ու-
նեին կամ մտաւորականութեան շարքերից էին
դուրս եկել, միւսները բանւորներ էին: Ամենու-
րեք հասարակութիւնների միջև գոյութիւն ունե-
ցող դասակարգային զանազանութիւնը, որոշ կեր-
պով արտացոլեց և ալդ սոցիալիստական համայնքի
վրայ, և ներքին երկպառակումները վերջիվերջով
այնպիսի կերպարանք ստացան՝ որ համայնքը ցըր-
ւեց: Նոյն տիպի ուրիշ մի քանի համայնքներ սո-
վորական կապիտալիստական ձեռնարկութիւնների
բնոյթ ստացան:

Այսպէս անցեալ դարի 40-ական թւականնե-
րին, Հիւսիսային Ամերիկայում հիմնւած էր այսպէս
կոչւած «Դուպէջական համայնքը»: Ընկերական
գործին մասնակից լինել ցանկացող ամէն մի ոմն
պիտի վճարէր իր բաժինը, պիտի գնէր իր համար
արժեթուղթ: Համայնքի անդամներից մէկը, մի
հարպիկ վաճառական, աստիճանաբար և աննկատե-
լի կերպով բոլոր արժեթղթերը գնեց և գառնալով
միակ բաժնեթղթեր ունեցողը՝ ցըրեց ամբողջ հա-
մայնքը, որն արգէն մի տեսակ կապիտալիստական
ձեռնարկութիւն էր դարձել:

ծշմարիտ է, բոլոր սոցիալիստական համայնքները ալդպիսի ախուր վերջաւորութիւն չունեցան: Կալին և այնպիսի համայնքներ, որոնց անդամները ծագումով անհաւասար էին, բայց չըրւեցին և մասնակի-կապիտալիստական ձեռնարկութիւններ էլ չլարձան:

Այսպէս, անցեղու գարի 80-ական թւականներին հիւսիսային Սմերիկայում, Կալիֆորնիայում կէվի անւանով մի համայնք էր հրմեւած: 90-ական թւականներին այնդեղ գնաց մի Սմերիկացի այցելութիշկ, և վերադարձին մանրամասն կերպով պատմեց մեզ այդ համայնքի նիստ ու կացի և կաղմի մասին հետեւալը: Համայնքի անդամների թիւը 500 էր, նրանցից մի քանիսը վաճառականներ էին, մի քանիսը ինտելիգենտներ, մի քանիսն էլ բանւորներ: Սմեն ընտանիք իրա համար տուն ունէր, թէ տունը և թէ նրանում գտնւած ամբողջ ինչը այդ ընտանիքի մասնաւոր սեփականութիւնն էր կաղմում: Բայց հօգն ու արտադրութեան միջոցները պատկանում էր ամբողջ համայնքին: Բոլոր անդամները պարտական էին ոչ աւել քան 8 ժամ աշխատել: Նրանց ամէն մի ժամւայ աշխատանքի համար տոմսակ էր տրում՝ որ 60 կոպէկի արժէք ունէր: Այսպիսով ուրեմն նրանցից ամեն մէկը կարող էր օրական 5 րուբլի վաստակել: Այդ տոմսակները պէտք էր ներկայացնել հասարակական պահեստատեղիներին և մթերքներ ստանար: Համայնքի բոլոր գործերը զե-

կավարում էին երեք բաժանմունքները, արտադրողական, սպառողական և ընդանուք գործերի (գաստիորակութիւն, պահպանութիւն, գւարճութիւն) բաժանմունքները: Այսաեղ ինչպէս երեսում է, իրօք սոցիալիզմը որոշ չափով իրականացրած է: Հօգն ու արտադրութեան միջոցները ընդհանուր սեփականութիւն են կաղմում: Մասնաւոր ձեռնարկութիւններ, մասնաւոր մագազիններ և փող գոյութիւն չունին, բոլորը պարտական են աշխատել, արտադրութիւնն ու սպառումը ամբողջ համայքի հսկողութեան ներքոյ է գտնւում:

Բայց մի ուրիշ տեսակէտից նայած՝ դա էլ գեռ սոցիալիզմ չի:

1) Այդ անպայման գեղեցիկ հասարակակարգի բոլոր բարիքներից օգտուում են միմիայն 500 հօգի, այն ինչ մնացած ամբողջ մարդկութիւնը այս համայնքում ապրելու հնարաւորութիւնից զրկւած է:

2) Բոլոր այդ բարիքներից կարող են օգտուել միմիայն նրանք՝ ովքեր որ որևիցէ կապիտալ ունեն, ասենք 1000 ր., ամեն մէկի բամինն այդ չափ է, ընդունելու համար դա որոշւած գումարը է:

3) Թէև աշխատանքը բոլորի համար էլ հարկադրակոն է բայց բոլորը միակերպ 8 ութ ժամ կաղրական է բայց բոլորը միակերպ 8 ութ ժամ կաղրական չէն, ցանկացողը կարող է աշխատել պարտական չեն, ցանկացողը կարող է ելեք ժամ աշխատել, բայց այնդէպքում էլ նա աւելի քիչ մթերք պիտի ստանալ հասարակական պահեստներից քան ուրիշները:

4) Վերջապէս—ուս տմենազլիխաւորն է—
ամէն աարւաշ վերջում, համայնքի եկամուտները
(ձեռագործների վաճառքից ստացւած փողեր)
նրա անդամների միջև բաժանուում են, համաձայն
տմեն մէկի գործ դրած աշխատանքի ժամերին,
անպէս որ համայնքի անդամները փող էլ ունեն,
այն էլ ունանք աւելի (նրանք, ովքեր աւելի են աշ-
խատել) միւսները քիչ (ովքեր քիչ են աշխատել):
Ինից դուրս է դալիս ուրեմն, որ այդ եկամի հա-
մայնքը կիսասոյիսալիխական համայնք է միաժա-
մանակ լինելով և սովորական բաժնետիրական ըն-
կերութիւն:

Այսպէս ուրեմն, ոչ սոցիալիխաւ-ուտոպիստների
դիմումները, և ոչ էլ նոցա հետեւորդների ընկերա-
կան կոոպերացիային փորձերը ցանկացւած նպա-
տակին չհասցըն, սոցիալիզմն իրականացնել չկա-
րողացն:

Ժամանակակից պեառւթիւնը սոցիա-
լիզմն իրականացնել կարող է.

Բայց կարող է պատահել որ այդ գեղեցիկ և
խոշոր գործը պետութիւնն ի կատար աժի:

Այդ կերպ մտաժում էր բանւոր դասակարգի
մեծ զեկավարներից մէկը, Լասոսլը: Նա հետեւեալ
կերպ էր դատում: Եթէ բանւորները կարողա-
նան միանալ մի ուժեղ քաղաքական կուսակցու-
թեան շարչը՝ ապա պետութիւնն ուզի:

Նրանց հաշւի պիտի առնի և ամէն աեսակի դիջութներ
անի: Դրա համար էլ նա սկսեց (գերմանացի) բան-
ւորներին կոչ անել՝ որ վերշիններս միանալին և
մի կուսակցութիւն ստեղծէին, բայց այդ բանը
իրականացնել չէր կարելի, քանի գոյութիւն չունէր
ընդհանուր ընտրողական իրաւունք: Լասոսլը մտա-
ժում էր թէ, այդ բանւորական կուսակցութիւնը
պետութեան համար մի սպառնալիք կդաւանաք: Դրա
հետ միաժամանակ նա կոչ էր անում բանւորներին
արտավրազական ընկերութիւններ հիմնել որոնք
պէտք է ընկերական հիմունքներով ապրանքներ
արտազրկին: Սակայն առանց փողի այդ միտքն
իրականացնել անկարելի էր: Ո՞վ պէտք է կապիտա-
լով սպառազինէր այդ բանւորական արտավրազական
ընկերութիւնները: «Պետութիւնը», պատասխանում
էր Լասոսլը: Նա սկսեց պետութեան գլուխ Բիսմարկի
հետ բանակցութիւններ վարել, այն լուսով՝ որ բան
դուրս կդար: Բայց Բիսմարկը լսեց-լսեց և ոչինչ էլ
չարեց: Եւ դա շատ հասկանալի է:

Ժամանակակից պետութիւնը դասակարգալին
կազմակերպութիւն է, նա կապիտալիստների ձեռ-
քում աիրապետութեան համար զինք է դառել, այդ
պատճառով էլ նա չի կարող ստեղծել անպիսի հա-
սարակակարգ՝ որն անհրաժեշտօրէն իրանց կապի-
տալիստներին պիտի հեռացնի:

Ահա մի ուրիշ փայլուն օրինակ էլ՝ որը նոյն-
պէս այդ բանի նշառութիւնը կապացուցի,

Գերմանական կալոր Վելհելմ Ա-ը երիտասարդ ժամանակ բանւորական հարցով շատ էր հետաքրքրություն։ Նա նոյն իսկ երազում էր սոցիալիստիայսր դառնալու ։ Նա հրամաններ արձակեց, որոնցում բանւօրների տնտեսական զրութիւնը բարելաւելու և հոգեսր բարիքների մասին էր խօսւում։ Այդ բոլոր միջոցները սոցիալիզմ լինելուց շատ հեռու էին, բայց ինչ էլ որ ըլինեին՝ այն ամենայնիւ սոցիալիզմի համար ՚ի հարկէ ձեռնտու էին։ Երբոր գերմանացի արդիւնաբերողներն ու կապիտալիստները երիտասարդ կայսեր այդ ծրագիրների մասին իմացան՝ լայտնեցին, որ, թէ նա չի գալարի բանւորների հետ բարեկամութիւն սարքնուց՝ ապա նոքա ստիպւած պէտք է լինեն վերաբնել իրանց միապետական զգացմունքները», ալտինքն նոքա դահին ալլեւ չեն աշակեցելու։ Եւ Վիլհելմը յանուն իմակերիալիզմի հրաժարւեց սոցիալիզմից։ Եւ նա ուրիշ կերպ չէր էլ կարող վերաբերել, քանի որ կանգնած էր բուրժուակապիտական կառավարութեան զլիսում։

Եւ ալսպէս սոցիալիզմն իրականացնելու փորձերն ՚ի զուր անցկացան, կապիտալիստներից աշակեցութիւն խնդրելը, լնկերական հիմունքներով կոռպերացիաների սարքելը և թէ պետական իշխանութիւնը օգնութեան կանչելը։ Ո՞վ կարող է և ո՞վ պիտի լինի սոցիալիզմի չերմ կողմնակիցները, ո՞վ կարող է և ո՞վ պիտի նրան կեանքում իրականացնի։ Պրոլետարիատը»— ալսպէս պատասխանեցին

այդ հարցին Մարշոն ու Էնգելսը։ Այդ հասարակ պատասխանը մարդկութեան պատմութեան մէջ նոր գարաշրջան բաց արեց։

Մարքսի և Էնգելսի պրոլետարական սոցիալիզմը.

Միմիան բանւոր դասակարգը, միմիան պրոլետարիատն է որ անմիջական կերպով շահագրգուած է և պահանջում է որպէսզի արտադրութեան միջոցները հասարակական սեփհականութիւն գառնան, ալլապէս չի էլ կարող լինել, որովհետեւ ժամանակակից հասարակութեան մէջ միմիան նա է որ զրկւած է սեփհականութիւնից, և նէնց դրանով էլ բացարւում է նրա անտեսական, բազաքահան և հոգեսր սարկութիւնը։ Դրա համար էլ նա կանականօրէն սոցիալիզմի մարտիկն է համարւում, սոցիալիզմը նրա համար միւնոյն է թէ դարաւոր շղթաներից ազատագրութիւն։ Այդ միտքը պարզ և որոշ կերպով յատնեցին առաջին անգամ Մարքսն ու Էնգելսն իրանց 1846 թւին հրատարակած «Կոմմունիստական Մանիֆեստում»։ Նոքա գարձան էմիգրանտներ և իրանց ամբողջ կեանքը նւիրեցին այդ գաղափարն իրականացնելու համար մղւող կուլին, նրանք գրան ժառալեցին թէ խօսքով և թէ գործով։

Բաւական չէ ասել որ սոցիալիզմը կիրականանայ միմիան բանւոր դասակարգի ձեռքով, և

ոչ թէ բուրժուազիալի, ինտելիգենցիալի, ընկերակցական կոռպերացիալի և պետական իշխանութեան միջոցով, անհրաժեշտ է և ցոյց տալ այն ճանապարհները որոնցով պիտի գնայ և իր նպատակին հասնի բանւոր դասակարդը:

Որքան էլ որ բանւորները անտեսական կուի միջոցով չբարելաւէին իրանց նիւթական և սոցիալական դրութիւնը, այնու ամենայնիւ սոցիալիզմն իրականացնելու համար, այսինքն արտադրութեան միջոցները հասարակական սեփականութիւն դարձնելու համար՝ հարկաւոր է մի բան, անհրաժեշտ է որ բանւոր դասակարդը պետական իշխանութիւնն իր ձեռքը վերցնի: Ուրեմն բանւորների առջև կանգնած հերթական հարցը քաղաքական իշխանութիւն և քաղաքական իրաւունքներ ձեռք բերելու հարցն է: Միմիայն պետութիւնն իրանց ձեռքը վերյնելով, միմիայն տիրող դասակարդ դառնարով նաքա կկարողանան օրէնք հրատարակել՝ որի հիման վրայ արտադրութեան միջոցներն առնեին բուրժուազիալի ձեռքից և լանձնւին պրոլետարիատին:

Դա նշանակում է էկոպրոպրիացիա անել, դա նշանակում է մի ամբողջ դասակարդ զրկել սեփականութիւնից, բայց միթէ ինքը բուրժուազիան տնտեսական և քաղաքական իշխանութեան ձգտելիս չկատարեց մի շարք ալգոպիսի էկոպրոպրիացիաներ: Միթէ նա իր դորժարաններով և մեքե-

նաներով չոչնչացրեց մանր արտադրողներին, արհեստաւորներին, մինչև հիմքը չըրեմց ու չտարաւերքեթի ալդ ծաղկած ու բաղնամարդ գասակարգին, չղրկեց նրան աշխատանքի դէնքերից, որոնք պողպատէ հրէշների դէմ կուելու անընդունակ էին, կամ թէ միթէ չղրկեց նրան գոլութեան միջոցներից: Նա չէ՞ր, որ արհեստաւորներին էկոպրոպրիացիալի ենթարկեց և պրոլետարացրեց նրանց: Եւ միթէ նոյն ալդ բուրժուազիան չէ՞ր որ աւատական և նորտական սեփականութիւնները ոչնչացրեց: Եւ Ֆրանսական բուրժուազիան չէ՞ր որ մեծ լեղափոխութեան օրերին ազնւականութեանը իրաւունքներից և սեփականութիւնից դրկեց:

Ալապիսով ուրեմն, այն ճանապարհը որով պրոլետարիատը դնալու է դէպի սոցիալիզմ՝ պետական, քաղաքական իշխանութիւն ձեռք բերելու համար մզւող կոփւն է, մինչև այժմ ալդ իշխանութիւնը բուրժուազիայի ձեռքին է գտնուում, որով նա ճնշում է պրոլետարիատին, իսկ անցնելով բանւոր դասակարդի ձեռքը՝ կազատի նրան սարկական շղթաներից: Բուրժուազիան կապիտալիզմի հիմքերն ամրացնելու համար իշխանութիւնն էկապիտական միայն մի տեսակ միջոց էր գարձրել իսկ իր ձեռքին մի տեսակ միջոց էր դարձրել իսկ պրոլետարիատը տիրանալով դրան ոչնչացնելու է կապիտալիզմը:

Սոցիալիստական բանւորակտն կուսակցութիւնների պռաջացումը.

Եւ ահա անցեալ գարի 70-ական թւականներից սկսած՝ առաջ են դալիս ամէն տեղ, եւրոպայում, Ամերիկայում, աւելի ուշ՝ նաև Եապոնիայում, Աւստրալիայում և Արգենտինայում (արաւալին Ամերիկա) սոցիալիստական բանւորական կուսակցութիւններ, որոնք յետազայում քաղաքական իշխանութիւնը գրաւելու նպատակով բոլոր երկրների բանւոր գասակարգերն սկսում են կազմակերպել որպէս ինքնուրոյն քաղաքական կուսակցութիւններ, գրանց բոլորի նպատակն է եղել իշխանութիւնը և արտադրութեան միջոցները համայնացնել, այլ կերպ ասած յանձնել պետութեանը։ Սակայն սոցիալիզմն իրականացնելու համար բանւորներին քաղաքական կուսակցութիւնների մէջ մտցնելը բաւական չէ։

Իսկ որովհետեւ արտադրութեան կապիտալիստական եղանակը տիրապետում է բոլոր երկրներում, որովհետեւ բոլոր երկրներում էլ տիրող գտապիտիքը բուրժուազիան է, որովհետեւ սոցիալ-տնտեսական պայմանները համարեն ամէն տեղ էլ միակերպ են, ուզա ուրեմն անհրաժեշտ է որ բանւորները ոչ միայն առանձին առանձին երկրներում միութիւններ կազմեն, այլև փաստօրէն ամբողջ աշխարհում միանան։ Այդ պատճառով էլ Մարքս

էնգելսն իրանց «Կոմմունիստական Մանիֆեստ» հետեւալ բառերով վերջացրին, «Պրոլետարներ բոլոր երկրների միացէք»։

Բանւորական սոցիալիստական շաբաթման միջազգային բնութիւնը.

Բանւորական սոցիալիստական շաբաթման վաղուց սկսեց սոցիալիստական բնութիւնը կրել 1864 թւին, Լոնդոնում առաջացաւ «Բնութիւնացիոնալլ» որի հոգին Մարքսն էր, և մէկ 1876 թւին նա յրեց՝ բայց այնուամենալիս 1889 թւին նորից յրեց՝ բայց այնուամենալիսիւ 1890 թարունակից կեանք առաւ և իր գորութիւնը շարունակեց մինչև համաշխարհային պատերազմի սկիզբը։*)

Որպէսզի բանւոր գտապիտիքը կարողանալ սոցիալիզմն իրականացնել, դրա համար բաւական չէ որ նա մտնի սոցիալիստական կուսակցութիւնների և նրանց միշազգային միութեան մէջ, դրա համար հարկաւոր են և մի քանի այլ արտաքին պայմաններ, որոնք կախում չունին ոչ գիտակցութիւնից և ոչ էլ պրոլետարիատի կամքից։ Դրա համար անհրաժեշտ է ամենից առաջ ինքնուրոյն արդիւնաբերական ձեռնարկութիւնների կրծառումը, պէտք է որ գործարանները ըստ հետարարում, պէտք է որ գործարանները ըստ հետարարում, պէտք է որ գործարանները կենարունացում է պիտաների և գործարանների կենարունացում է պիտաների վերջու որքան աւելի քիչ ձեռ-

*) Կարգաւ Շնուհենացիոնալ գրքում.

ունին ահազին կապիտալ (40 միլիարդ ըուբլի)՝
այդ փոքրաթիւ ձեռնարկութիւններից անձն մին
հանդիսանում է մի ուհագին տնտեսութիւն որ
ընդհանուր ցուցութերի համաձայն է աշխատում:
Նախկին ջոկ ջոկ և ինքնուրովն տնտեսութիւնների
միացում նկատում է ոչ միայն Ամերիկայում,
միացում նկատում է ոչ միայն Ամերիկայում,
այլև բոլոր եւրոպական երկրներում, նոյնիսկ այն-
պիսի համեմատաբար լետամնաց երկրում, ինչպի-
սին Խուսաստանն է մետաղի, ածուխի և շաքա-
րի արդիւնաբերութիւնները ալգիսի միութիւն-
ներ են կազմակերպել: Սոցիալիզմն իրականացնե-
ներ համար, ինչպէս արդէն Մարքսն ասել է՝ այդ
